

Հր. ԱՌԱՄՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ Ք 2.

36. ԵՐԲ Լ ԴԱՐՁԱՎ 2.

Ամենքիս հայտնի է, որ Ե դարում հայերը ունեին երկու տեսակ լ. մեկը նուրբ լ, որ արտասանվում էր լեզվի ծայրով, ինչպես է այսօրվա սեր լ ձայնը, և երկրորդ՝ հաստ կամ թանձր լ, որ արտասանվում էր լեզվի հետևի մասով: Այսպիսի հնչյուն ունեին նաև լատիները, ունին լեհերը և ինքս էլ լսել եմ Պոլսի հունաց արդի արտասանության մեջ: Այսպիսի լ ձայնը հին հայերը գրում էին ղ տառով, որ ապա ավելի թանձրանալով, դարձավ արդի կոկորդական ղ և սրանով ստացանք այնպիսի աններդաշնակ բառեր, ինչպես են խաղաղ, խաղող, ուղիղ և այլն: Սրանք նախապես հնչվում էին խալալ, խալոլ, ուլել և այլն:

Ինականաբար կային այս ձայների գործածության որոշ պայմաններ. այսպես բառակցքում ամենամեծ մասամբ լինում էր լ և ոչ թե դ: Այս դ ձայնով սկսող բառերը օտար են. ինչ. դել<ասոր. leqa, դեմքակ<հուն. λέντυον, լտ. linteum և այլն. մյուսները դեռ մեկնված չեն. ինչ. դողիլ, դողանցել: Եթե դ ձայնը ընկներ բառի սկիզբը, իսկույն սաանում էր Ե կամ ա հենարանը. ինչ. եղբայր, աղբյուր և այլն:

Բառամիջում, երկու ձայների միջև կարող էր գտնվել թե լ ե թե դ. բայց բաղաձայնից առաջ լինում էր միշտ դ և ոչ լ: Այս ձայնական օրենքը գտավ Meillet հայագետը:

Բառավերջում ունինք ձայնավորից հետո թե լ և թե դ. ինչ. գոլ և գոդ. բայց յ-ից հետո լինում է միշտ լ. ինչ. ալլ, փալլ, քալլ, նշալլ ևն: Եթե որևէ պատճառով այս յ ձայնը վերանար, լ դառնում էր դ. ինչ. ալլ—աղաւաղիլ, նշալլ—նշողիլ, յոլլ—յողալ, փալլ—փողփաղիլ, քոլլ—քողուլ և այլն:

Նկատել եմ որ բառավերջում եթե լ գտնվի բաղաձայնից հետո, կդառնա դ. այսպես ունինք թե բնիկ հայ և թե օտար բառերից՝ ասող, արկղ, կունդ, նույն իսկ Պրոկղ, Հերակղ:

Իմ նպատակը չէ խոսել լ-ի և դ-ի ձայնական օրենքների մասին. այս մի քանի կետերը հիշեցի, մի քիչ հետո օգտագործելու համար:

Որոշելու համար թե երբ լ դարձավ դ, մենք ունինք երկու միջոց. առաջին՝ այսօրվա բոլոր հայ բարբառների արտասանությունը և երկրորդ՝ լ ձայնի տառադարձությունը:

Այսօրվա հայությունը ամբողջությամբ, ամենահեռավոր Ամերիկայի հարավային ծայրից (Պատագոնիա) մինչև Սուչավա, ուր սկսում են հայ բարբառները, և Սուչավայից մինչև Ջավա, ուր վերջանում են հայ բարբառները, ամեն տեղ ու բաղաձայնը հնչում են ՛ի Այսպիսի ընդհանուր համատարած օրենք չէր կարող առաջանալ հայության մեջ, արտագաղթից

հետո, ուստի դժայնի կոկորդական Կ հնչումը արդեն ձևացած է եղել հայոթյան մեջ նախ քան Կիլիկիայի դադթականությունը (1080 թ.) և նախ քան Բագրատունյաց պետության կործանումը և Անիի գաղթը (1046 թ.) — ժԱ դար:

Թե ժԱ դարում արդեն չդարձել էր դ, հաստատվում է Աղսարթուն անվան տառադարձությամբ: Աղսարթան անունը վրացերեն գրվում է ճըշտիվ Աղսարթան, պարսկերեն Axsatan. հայերեն գրված է միշտ դ-ով: Առաջին անձը՝ որ կրում է այս անունը, Դավիթ Անհողինի թոռն է, Աղսարթան, որին որդեգրեց Կախեթի Կյուրիկե Գ թագավորը († 1029). հիշում է նրան Օրբելյանի ժամանակագրությունը (էջ 15) և մեռած է դնում 1079 թ.: Մյուս Աղսարթանները՝ թվով հինգ, ժ-ի դարից են. ոմանք նույն իսկ գերված են խով (այսպես Վարդան պատմիչ՝ գլուխ 26):

Այն ենթադրությունը, թե ժԱ դարում դ արդեն դարձել էր Կ, խախտվում է երկու եվրոպական անունների տառադարձությամբ Կիլիկյան շրջանում: Սրանք են Ըոնադոս, Ռեմադոս < Renald և Պադուին, Պադուոյն < Balduin, Baldouin. Թերևս գտնվին նաև մի քանի ուրիշ ձևեր էլ (Սրանց մասին տես Karst. Kilik. arm. 38):

Պետք է որոշել թե սրանց մեջ դո կարդացվում էր Լd թե՞ Կd. առաջին դեպքում քանդվում է մեր ստացած այն օրենքը, թե ժԱ դարում դ դարձել էր Կ (Պադուին անունը կրում են նաև մի քանի հայ անձինք, որոնցից հնագույնն է Պադուին, պարոն և տեր Ընկուզուտի. ներկա եղավ Լևոն Ի-ի թագադրության հանդեսին, 1199 թ.): Երկրորդ դեպքում այլանդակ է եվրոպական Լd ձևի դեմ դնել հյ. Կd: Իայց թե այս դեպքում դո հնչվում էր իւոք Կd, ամեն կասկածից դուրս է, ինչպես ցույց է տալիս մարաջախտ < mureschalt բառը: Այստեղ ոչ թե միայն Կd, այլ նույն իսկ տեսնում ենք xī (վերջածայն խուլ տ-ի մոտ դ թավացած):

Ինչպես դուրս գալ այս երկընտրանքից: Karst-ը այս մասին ոչինչ չի ասում և պարզապես ընդունում է Կd հնչումը:

Իմ ուսուցիչը՝ հայագետ Meillet, իր մի մասնավոր խոսակցության ժամանակ, հայտնեց ինձ այն միտքը, թե հին ֆրանսերենում al ձայնախումբը արդի օ ձայնավորին անցնելուց առաջ՝ անցել է միջին աղաստիճանից: Դրա համար էլ ունինք գրված Renault, Renaud, Renald, Renau և Balduin, Baldouin, Baudouin անցման ձևերը: Հայերենը իր դո, խո տառադարձությամբ տալիս է մեղ սքանչելի նյութական ապացույց այդպիսի հնչման գոյության հին ֆրանսերենում:

ԺԱ դարը երևույթի վերջին սահմանն է. իսկ սկիզբը պետք է դնենք արաբների արշավանքից հետո, որովհետև ունինք արաբերենից փոխառյալ ۛۛۛۛۛۛ ۛۛۛۛۛۛ ۛۛۛۛۛۛ ۛۛۛۛۛۛ բառը, որ հայերենի մեջ դարձել է կուլղ, համաձայն վերջածայն ۛ-ի այն օրենքին, որով բաղաձայնից հետո դառնում է դ և ոչ ۛ (արկղ, աստղ, կոճղ, Հերակղ, Պրոկղ). Կուլղ բառը կենդանի է մեր բոլոր բարբառներում. ինձ ծանոթ են առաջիմ Ախալցխա՝ կոլալանգ, Մոկղ՝ կոլալիս, Երևան, Տփղիս՝ կոխալիս, Ալաշկերտ, Մուշ՝ կոլբես, Սվեդիա՝ գրղբալ, Պոլիս՝ գրղբանգ, Նոր-Նախիջևան՝ գրղբալ, Սուչավա՝ գրղբալ, Սիվրի-Հիսար՝ գուլբալիս, Վան՝ կոխալիս, Հաճին՝ գոլբել, Սերաստիա՝ գրղբի:

Արաբների արշավանքը Հայաստան է դարից է. բայց գոնե մի դար պետք է դնել, որպեսզի արաբերենը տարածվեր Հայաստանում և բառեր

փոխ առնվելին հայերինում: Այնուամենայնիվ Ը դարից մինչև ԺԱ գար միջոցը շատ մեծ է և պետք է ավելի սեղմել:

Անշուշտ, եթե իմանայինք կողպեմբ բառի փոխառության թվականը, շատ բան կպարզվեր: Դժբախտաբար շատ ուշ է ավանդված այս բառը. ամենահին վկայությունը Օրբելյանից է. «Եղիալ ի փոքրիկ սնդուկ փայտեայ և կոպղեալ» (հրտր. էմինի, էջ 353): Օրբելյանը մեռել է 1304 թ., հոգևոր կոչում է ստացել 1280 թվին: Բայց կոպղ բառը այս թվերից շատ ավելի հին է, որովհետև պահում է վերջածայն լ-ի օրենքը, մինչդեռ զուևոստապլ բառը՝ որ 1276 թվին կար (Սմբատ Դուռնդստապլը մեռել է այս թվին), չի պահել այդ օրենքը և չի դարձել Դուռնդստապլ: (Այսպես նաև դամփլ <temple «տաճար» և տուպլ <double «կրկին»):

Երկու ուրիշ փոքր վկայություններ էլ կան, որոնք գոնե մի դարով ետ են տանում դ-ի թվականը: Այսպես Հովհաննես Վանական վարդապետի (ծն. 1181 թ.) «Մեկնութիւն Յորայ» գրքում, որից հատվածներ կան հրատարակված Իսիդորի երիցու Երուսաղեմացւոյ Մեկնութիւն Յորայ գրքում (ապ. Վենետիկ, 1913), էջ 309 գրված է «Ջայլամն ոմանք զիշարմուղն անուանեն»: Այս բառը պրս. *استورمور* *usturmur* «ջայլամ» բառն է, որից երևում է որ 1181 թվին հ. դ արդեն թանձրացած էր: Մխիթար Դոշը սկսել է գրել իր Բատառտանագիրքը 1184 թվին. այդտեղ գտնում ենք հուն. *ληγῶτον* բառի դեմ լիդատ ձևը, որ ցույց է տալիս նույնպես թե այդ թվին դ ձայնի թանձրացումը կատարված իրողություն էր:

Իմ գտած հնագույն վկայությունը, որ ներկայացնում է սրբաբ. կամ թրք. է ՚յ ձայնի դեմ հ. դ, արաբ ոստիկան Բուդայի անունն է (Թ դար): Սա թրքական *buğa* «ցուլ» բառն է, որ նաև իբրև անձնանուն գործածական էր այն ժամանակ: Օրինակ՝ Bogha-el-soghayr՝ արաբների Մուսթավաքքի խալիֆայի թիկնապահապետը, որ սպանեց նրան 861 թ. (տես Vaujany, Histoire de l'Egypte, էջ 202): Բուդա ոստիկանը արշավեց Հայաստան 850 թ. իր անունը գրված է Բուդայ կամ Բուխայ (Զամչ. Բ. 445). և այդ շատ լավ է, որովհետև նոր տառադարձությունները միշտ տատանյալ ձև կունենան: Բուդայի մասին ընդարձակ խոսում է Հովհաննես Ե կաթողիկոս Բրասխանակերտցին (898—929 թ.): Իր Պատմությունը հասել է մեղ դանդան օրինակներով, դժբախտաբար շատ ուշ ժամանակից: Ըստ մեր հմուտ ձեռագրապետ պրոֆ. դր. Աշոտ Աբրահամյանի հաղորդած տեղեկության (1947 թ., դեկա. 26) մեր Մատենադարանում ունինք 7 օրինակ, որոնք դրված են ԺԸ դարից առաջ, հնագույնը 1597 թ.: Երկար ժամանակ կասկածել եմ ես Բուդայ գրչության վրա. արդյոք դա Հովհաննես Դրասխանակերտցու ձեռքից է գուրս եկած, թե ուշ ժամանակի սրբագրություն է: Թրք. բուդա «ցուլ» բառը այնպես սովորական է հայոց մեջ, որ ամեն մի գրիչ կարող էր իսկույն բուխան սրբագրել բուդայ: Հմտ. մեր մեջ գործածական Աղբուդա անձնանունը (հնագույն հիշատակությունը 1240 թվից), բուն նշանակությունը «սպիտակ ցուլ»:

Բուդա անվան բուխա գրչությունը միշտ այս կասկածն էր ներշնչել ինձ:

Եվ իրոք, մինչդեռ Դրասխանակերտցու Պատմության Երուսաղեմի հրատարակությունը (1867 թ) ունի միշտ Բուդայ ձևը, Տփղիսի հրատարակությունը (1912 թ) ունի միշտ Բուխայ. (ըստ անվանացանկի՝ գործածված է 10 անգամ, էջ 118—134):

Այժմ գտնուել եմ մի ուրիշ լավագույն վկայություն, Կաղանկայտուացին (հտ. Գ. զլ. ԻԱ) պատմուել է թե Բաղդդի ամիրսան Նախիջևանում նահատակել է Հովհան մանուկին, 834 կամ 852 թ.: Ըստ Մարքվարտ, Բագր. 54 այս ամիրան է Հասան-րին-Ալի-ալ-Բաղդդի-ալ-Մամունի: Բաղդդի կամ Բաղդիս այնպիսի անսովոր անուն է, որ կարելի չէ մտածել, թե որևէ գրիչ սրբագրած լինի Բաղդա անվան նման: Ուստի նա անշուշտ հարազատ է և $\eta = \xi$ տառադարձությունը տանուել է Թ դարի կեսը:

Բաղդա անունը հիշատակուել է նաև Թովմա Արծրունին (Թ դար). նա հիշուել է ոստիկանի անունը 40 էջ, բայց դարձյալ Բաղդայ և Բուխայ տատանյալ ձևով. և որովհետև ինքը վանեցի է և վանեցոց համար իս և և միևնույն բաներն են, ուստի իր երկու ձևերի վրա ավելացել է նաև Բախայ:

Ասողիկն էլ ունի Բաղդայ անունը և միշտ η տառով (հրտր. Պետերբ. 1885, ըստ ցանկի 4 անգամ):

Թովմա Արծրունին հիշուել է նաև Բաղդադը (էջ 106), որ Արքայան խալիֆաների մայրաքաղաքն էր և հիմնվեց Ը դարի կեսին: Այս անգամ Բաղդադ գրչությունը հաստատուն է և չունի վարիանտ: Սեբեոսը բնականաբար չպիտի հիշեր Բաղդադը, որովհետև ինքը է դարի կեսի մարդ է: Իսկ Ղևոնդը, որ ապրել էր մինչև Ը դարի վերջերը (Զարբ. Հին դար. 497), բնականաբար պիտի ճանաչեր: Եվ իրոք մի անգամ հիշատակուել է այդ քաղաքը Բաղդադ ձևով (սեբ. տպ. Պետերբ. 1887, Գլ. 17, էջ 145): Դժբախտաբար այս էլ հետին սրբագրություն է. և այդ հայտնի է նրանից, որ ձեռագիրը ունեցել է արևմտյան հետին տառադարձությամբ Պաղտատ և հրատարակիչը դարձրել է Բաղդադ:

Զարմանալի է որ Յովհաննէս Դրասխանակերտցին, որ մեռել է 929 թվին, դեռ չգիտե Բաղդադը և կոչուել է «Բաբելոն»: Այսպես՝ հիմնվելով Տփղիսի 1912 թվի հրատարակության ցանկի վրա, չկա Բաղդադ, բայց կա Բաբելոն՝ երկու անգամ: Առաջինն է՝ էջ 193 «Ապա գրէ հրովարտակս և առաքէ դեսպանս և ընծայս գեղեցկայարմարս Իսմայէլեան ամիրապետի Բաբելոն»: (նույնը տպ. Երուսաղէմի, զլ. 1թ. էջ 242, var. դեսպակս, Ի Բաբելոն): Երկրորդն է տպ. Տփ էջ 325 «շուրջ զթագաւորանիստ քաղաքուն Բաբելոնի»:

Ասողիկի մոտ (Ժ/ԺԱ դար) նույն քաղաքը հիշված է Բաղդատ ձևով, ութ անգամ (ըստ ցանկի հրատ. Պետերբ. 1885):

Այժմ անցնում ենք վրաց աղբյուրներին: Հայտնի բանասեր Լ. Մելիքսեթ-րեկը հրատարակեց իր երկնատոր աշխատությունը (Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, Երևան 1934—6), ուր հավաքված են այն բոլոր հատվածները, որ տալիս են վրաց հեղինակները հայոց մասին: Աշխատությունը հատկապես մեր նպատակի համար շատ լավ է կազմված, որովհետև թարգմանիչը ամեն անգամ հատուկ անունների կողքին փակագծով դնում է վրացերեն տառադարձությունը: Ամեն տեղ ուր պատահում է η տառով մի բառ, վրացին դնում է γ : Այսպես օր. Արսեն Սափարացու (Թ դար) հատվածում ունինք Ա հտ. էջ 35 Եկեղեցաց = Ելեկեցի, էջ 42 Մուշեղ = Մուշել (նույնը էջ 43), էջ 44 Շողակաթ = Շուլկաթ, Եղվարդ = Ելիվարդի, էջ 45 Մաթուսաղա = Մաթուսալա, և այլն:

Զեմ ուղում երեսներ լցնել այս կարգի բառերը հավաքելով, որոնք

համար հատուկ ցուցակ է տվել նաև պրոֆ. Լ. Մելիքսեթ-րեկը, էջ 69—70, ապա էջ 84—85:

Ինչպես պրոֆեսորը՝ էջ 63—66 ցույց է տալիս, վրացի հեղինակը օգտվել է հույն աղբյուրներից, բայց նա կուրորեն չի հետևել բնագրին. այլ տառադարձությունը ճշտել է ըստ հայերենի: Այսպես օր. Մաշտոց, Մուշեղ և այլն բառերի մեջ դրել է ոչ թե ս, ինչպես է հույնը, այլ ճշտիվ շ, ինչպես է հայերենը:

Եթե վրաց աղբյուրները ուշ շրջանում գրած լինեն հյ. դ-ի դեմ և, դա ոչ մի նշանակություն չունի. նրանք պարզապես հին աղբյուրների ավանգուծությունը, ճիշտ ինչպես այսօր մենք գրում ենք Տփղիս (դ-ով), հաստատ իմանալով հանդերձ թե վրացիք ասում են Թբիլիսի և պարսիկները Թիֆլիս (լ-ով):

Նմանապես երբ վրացոց շատ ուշ շրջանի աղբյուրները գրում են դ-ի դեմ ո, այդ էլ նշանակություն չունի. նրանք հավատարմությամբ տառադարձել են այն՝ ինչ որ լսել են: Կարևորը միջին շրջանն է:

Օրինակ՝ Վրաց անանուն պատմիչը (ԺԱ դար) «Վրաց մատյանը» գրքում (տես Վրաց աղբ. Ա. էջ 200), Արաբական արշավանքները պատմելիս գրում է Բուղա (var. Շուղա) և Բաղդադ, Երկունս էլ վաղուց հայտնի ձևեր են:

Նույնպես Ժե դարի պաշտոնական գրությանց մեջ (Վրաց աղբ. հտ. Բ, էջ 74) գտնում ենք հյ. Մաղասբերդի փոխարեն վրաց. Սալաթբերթի: Կամ թե Ժե դարում, Փարսական Գորգիջանիձեի Պատմության մեջ (Վրաց աղբ. հտ. Բ, էջ 89), Վաղարշապատը տառադարձված է Վաղարշափաթ և նմաններ: Այս բոլորը մեր հարցի համար այլ ևս նշանակություն չունին:

Այժմ անցնենք այն բառերին, որոնք ընդհանուր են թե հայերենի և թե վրացերենի: Սրանց մեջ մեծագույն մասամբ դ-ի դեմ դանում ենք վրաց. յ. ինչ. քաղաք = քալաքի, պտուղ = պտուլի, մախաղ = մախալի, եղերդ — ալերդի, բաղարջ = բլարջի, սոդ = մեյի, շիւղ = շուլօ, տոդ = տուլօ, տաղախ = տալախի և այլն:

Մի քանի դեպքում հյ. դ-ի դեմ գտնում ենք դ. այսպես են՝

հյ. թաղար = վրաց. քաղարի, երկունս էլ փոխառյալ թաթարերենից:

հյ. բաղդինջ < վրաց. բաղինջա, լղաւել < բղավիլի, ճղաւնգիտէլ < ճղ'ոն-դիդիլի, ծինամձոր < ծինամձորի ուշ ժամանակի փոխառություններ են վրացերենից հայերեն. հնագույնը՝ ծինամձոր 1245 թվի մի արձանագրության մեջ:

հյ. տուղտ > վրաց. տուլտի, օդ > վրաց. օդի «գինդի օղակը» բոլորն էլ ուշ ժամանակի փոխառություն են հայերենից վրացերեն:

Մնում է հյ. ջրմուղ, որից կազմվել է վրաց. ջուրդմուլի «ջրհոր», առաջին մասում պահելով հյ. օւլր բառը և նրան կցելով վրաց. դմուլի «խոր, խորունկ» (ըստ Մառի ЗВО 11, 58):

Ահա սրանք են մեր հարցի առթիվ վրացերենի մատուցած նպաստները, որոնք եթե նոր բան չեն ասում, գոնե չեն հերքում, այլ նորանոր օրինակներով հաստատում մեր արդյունքները:

Կլանդրեի մեր եղբայրակից վրացի գիտնականներից, օր եթե ունեն որևէ նոր բան այս նյութի պարզաբանության մասին, հրատարակության տալին:

Պարսկերենն էլ ունի մի քանի բառ, որոնք շոշափում են մեր հարցը։ Առաջինը Մուշեղ անունն է, որ հիշում է Ֆիրդուսին (տես իմ Ֆիրդուսին Հայոց մասին, էջ 43, 63) Եւ Musil ձևով, սա այն Մուշեղ Մամիկոնյան զորավարն է, որ Մորիկ կայսրը օգնական ուղարկեց Պարսից խոսրով Թագավորին (584 թ.)։ Ֆիրդուսին կարող էր այս անունը հույններից ստացած լինել (շիտեղ s ձայնով)։ Բայց կարող էր նախապես զրած լինել Եւ Musil, ապա եռակետը կորչելով դարձած լինել Mūsīl. երկու դեպքումն էլ $\eta = l$ համապատասխան է Ջ դարի արտասանության։

Երկրորդն է պրս. سنبال sanbāl Բառը, սա այն բույսն է, որ հայոց մեջ կոչվում է «չաման» և զլխավոր դերն է խաղում ապուխտի պատրաստման մեջ։ Պարսիկ բառը կարելի չէ ստուգաբանել որևէ ձևով. ուստի կարծում եմ, որ փոխառյալ է հյ. շեքսպիրի ձևից։ Այսպիսի բառ չէ ավանդված մեր մատենագրության մեջ. բայց հեշտ է ենթադրել շուրջ քաղեկ բառերի բարդությունը։—Փոխառությունը կատարված պիտի լինի նախ քան Թ դարը։

Երրորդն է պրս. اخيز axīz, որ ձևով և իմաստով նույն է հյ. աղիւս բառի հետ։ Հայ ձևը չի կարող պարսկերենից ծագել, բայց պարսկերենը կարող է մեծ դյուրությունը ծագել հայ ձևից՝ ուշ շրջանի չ արտասանություն համաձայն։—Վրացին ունի l-ով ալիզի։

Չորրորդն է սաղաւարտ, որ Ե դարում արդեն փոխառյալ էր պահլավերենից։ Պհլ. ձևն էր *sarawart «զլխանոց», ուր թեև մեր դ-ի դեմ է ենք գտնում, բայց դա խաբուսիկ է։ Պհլ. բառի մեջ կրկին r-երից առաջինը տարանմանությունը դարձել է l, որով բառը դարձել է *salawart, սրանից էլ կանոնավորապես հյ. սաղաւարտ։

Հինգերորդն է սարաղուծ «վեղար, կնգուղ»։ այս բառը Առձեռն բառարանը միայն գիտեր և գրում է սարաղուծ. ըստ իս պետք է ուղղել սարաղուծ, ինչպես ունի Կուչակի մի երգը և ինչպես գիտեն մի քանի հայ բարբառներ։ Փոխառյալ է պրս. سراغ saraγuj հոմանիշից, որից են նաև վրաց. սարաղուծի, թթր. serayuj և թրք. soryuj. — փոխառությունը լինելով շատ ուշ ժամանակից, $\eta = \xi$ նշումը բնական է։

Ի վերջո պետք է հիշիմ հյ. աւաղ բառը (և դար), որ նման է հոմանիշ اواخ avax ձևին. բայց այս նմանությունը պատահական է և $\eta = \xi$ համեմատությունը առերևույթ։

Այժմ հիշատակելու եմ զավառական մի բառ, որ Վանի բարբառով շոքոտղուլի և Մեղրու բարբառով շտաղուլի ձևն ունի. երկուսն էլ նշանակում են «ղեղձ»։

Վանի բարբառում սալար բառը ջնջված է և նրա տեղ փոխ է առնվել պրս. آلوعا alūca հոմանիշը, որ آل alū բառի նվազականն է։ Պրս. alū բառի ծագումը հայտնի չէ. չունի Horn. հայտնի չէ նաև պահլավ ձևը. չգիտե Nyberg, Hilfsbuch des Pehlevi II. Բայց ինչպես որ պրս. آه āho «պակասություն» (հյ. ախսլ) ծագում է պհլ. āhōk ձևից, ինչպես որ պրս. جادو jadu «կախարդ, ջատուկ» ծագում է պհլ. jātuk ձևից, և ինչպես որ պրս. زالو zalu «տղրուկ» ծագում է հնագույն زالو zaluk ձևից, նմանապես հնթադրում եմ որ պրս. alu ծագած պիտի լինի պհլ. *aluk «սալար» ձևից։ Ահա այս բառից են ծագել Վն. շոքոտղուլի և Մղ. շտաղուլի «ղեղձ» բառերը, ինչպես և պրս. آفت-آل šaft-alū «ղեղձ» և زردالو zardalu «դառնակորիզ ծի-

րան», բոլորի էլ բուն նշանակութունն է «դեղին սալոր», ինչպես որ հյ. ղեղձ նշանակում է բուն «դեղին» (հմտ. դեղձան, դեղձանիկ):

ԺԱ դարում, թուրքերի արշավանքով կտրվեց հայոց հարաբերությունը Պահլավների հետ. ուստի շարտադուլ բառի փոխառությունը այս թվից առաջ է: Բայց պահլավերենն էլ ուշ շրջանում չէր պահած այլևս բառավերջի ք ձայնը, ուստի փոխառությունը էլ ավելի հին է: Այս ձևով հասնում ենք այն թվականին, երբ պհլ. 1 պետք էր որ դառնար հյ. դ.՝

Հողվածիս վերջում դիմում եմ Պորենացուն:

Պորենացու մոտ (Բ. ձա) երկու ճենացու անուն կա. Բղդոխ և Մամդուն. սրանք երկուսով «դայեկորդի էին, մեծ նախարարք»: Սրանց մասին խոսում է նաև Սեբեոսը (տպ. 1939, էջ 12), բայց կոչում է Մամիկ և Կոնակ: Մալխասյանը իր աշխարհարար թարգմանության մեջ (էջ 308, ծան. 22) Բղդոխ անունը մեկնում է մոնղոլ. Բոդդիխան բառով, որ «տիտղոսն է չինական կայսրների՝ մոնղոլերեն, որ նշանակում է մեծ կամ սուրբ թագավոր»։— Будагов-ի բառարանումն էլ (Сравни. слов. турецко-татар. нар. 1869, էջ 6 284) գտնում եմ կիրգիզերեն боддахан boɣdaخان «титул Кит. императора, богдыхан»: Անհնարին է Պորենացու Բղդոխը միացնել Բոդդիխանի հետ, որովհետև անհնարին է Ե դարում ապրող Պորենացու մեջ գտնել $\eta = \gamma$. Նա կարդացվում է միայն Բլդոխ:

Պորենացու դիրքը որոշելու համար 1 և 2 տառերի հարցում, քանի որ անհնարին է գտնել նրա մոտ Բուլա, Բաղդադ և նմաններ, վերցնում ենք Բուլդար ժողովուրդի անունը: Այս բառը մի անգամ գործածված է Պորենացու մոտ՝ Դիրք Բ, գլ. 2, հետևյալ ձևով. «Իջանել ի տեղիս խոտաւէտ մերձ ի սահմանն Շարայի, զոր հինքն Անփայտ և վերին Բասեան կոչէին. իսկ յետոյ վառն հատուածին Վղընդուր Բուլկարայ Վնդայ բնակելոյ ի տեղիս, յանուն նորա անուանեցաւ Վանանդ»:

Այս բառը սքանչելի կերպով ցույց է տալիս, որ Պորենացու մոտ 2 հնչվում է դեռ 1 և տակավին 2 հնչումը չէ ձևակերպված:

Նույն հատվածը Թ գլխում պատմվում է հետևյալ ձևով. «աղմուկ մեծ լեալ ի գօտիս մեծի լերինն Կալկասու յաշխարհին Բուլդարայ, և բազումք ի նոցանէ հատուածեալք եկին յաշխարհս մեր և բնակեցան ներքոյ Կողայ» (Այսպես ըստ հրատ. Վենետիկի Նոր հրատարակությունը (Տփ. 1913) մեծ անուշադրություններ երկու դեպքումն էլ դ-ով (Բուլդարայ, Բուլդարայ):

Բուլդարայ ձևը իր 2 ձայնով չի համապատասխանում նախորդին, ուստի հետին սրբագրության արդյունք է: Այս բանը ապացուցվում է նաև նրանով, որ Հովհաննես Դրասխանակերտցին էլ, որ փոխ է առնում Պորենացու հիշյալ հատվածը իր պատմության մեջ, գրում է. «Յաւուրս սորա հատուածեալք ոմանք ի Հրէից բնակելոց ի Բուլկարս, որ ի ծործորս Կովկասու, եկեալ բնակէին առ ի ստորև Կողայ» (հրատ. Եմ. էջ 36=հրատ. Տփ. 27):

Բուլդարները հիշված են նաև Ասողիկի մոտ 11 անգամ և բնականաբար միշտ էլ Բուլդարք ձևով:

Ահա այն բոլոր տվյալները, որ կարողացել եմ հավաքել 2 ձայնի ծագման մասին:

Անշուշտ դ-ի ծագումը մի տարում տեղի չունեցավ և մի անգամից ամբողջ Հայաստանի հողի վրա չտարածվեց, այլ նախ մի որոշ գավառում,

որից հետո տարածվեց կամաց կամաց ամբողջ երկրում: Այսպես է լուրոր
ձայնական օրենքների ծագումը և տարածումը:

Հայոց լուրոր շրջակա մոզովուրպները ունենին զ. այսպես Վրացիք և
Ազգանները ունենին երկու տեսակ ղ (ղ և ղ'). արարները ունենին չ' ղ և
ձ Q, որ ղ-ի մասիկ հնչում ունենր. պարսիկները ունենին չ (չ), որոնց ավե-
լացավ հետո նաե թուրքերեն չ (չ): Նույն իսկ Բելգանդական հունարենը
ուներ չ ղ հնչումը: Միայն հայերն էին բացառութուն կաղմում այս
կողմից:

Իմ ենթադրությամբ ղ ձայնը նախ երևան եկավ հյուսիսում, Ազ-
գանքի սահմանակից հայոց մեջ՝ Թ դարի սկզբից (հաղանկայտուացին),
ապա իջավ հարավ. Ժ դարի կեսին դեռ տատանյալ դրության մեջ է
(Բրաբանակերացի), իսկ ԺԱ դարում արդեն ամբողջ երկրում տարածված
է (Ասողիկ):*

* Այս հաղվածը ուսուերեն թարգմանությամբ կարդացվեց Հայ-վրացական Ակադե-
միաների միադյուլ նիստում, Թբիլիսի, 24 մայիսի 1948 թ.